ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2023 թվականի ապրիլի 18-ի, ժամը 14:00-ի նիստի
N 6 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- Դոցենտի գիտական կոչում հայցելու նպատակով գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը մասնակցելու համար **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնի դասախոս, տնտեսագիտության թեկնածու Անուշ Լավրենտի Թումանյանի** ռեկտորին ուղղված դիմումի մասին հարցը:

Զեկուցող՝ գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի նախագահ, հասարակագիտության ամբիոնի պրոֆեսոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, «ՀՊՏՀ ամբիոնի պատվավոր վարիչ» **Ա.Հ.Սարգսյան**:

Զեկուցողը նշեց. Ա.Լ.Թումանյանը 2012 թվականի հոկտեմբերի 3-ից առ այսօր աշխատում է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում. 03.10.2012 - 01.09.2013՝ տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի ծրագրային ապահովման ծառայությունում՝ ծրագրավորող, 02.09.2013 - 01.09.2019՝ ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնում՝ դասախոս, 02.09.2019 - 31.08.2021՝ ասիստենտ, իսկ 2021 թվականի սեպտեմբերի 1-ից՝ դասախոս: Վերջին 3 ուսումնական տարվա ընթացքում անընդմեջ իրականացրել է հայցվող գիտական կոչման մասնագիտությանը համապատասխան գիտամանկավարժական գործունեություն:

2021 թվականին Ա.Լ.Թումանյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն և ՀՀ ԲՈՀ-ի (ներկայում՝ ՀՀ ԲՈԿ) կողմից նրան շնորհվել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: Նա հրատարակել է 11 գիտական աշխատանք: Թեկնածուական ատենախոսություն պաշտպանելուց հետո տվյալ բնագավառում ունի հրատարակված ինչպես գիտական, այնպես էլ ուսումնամեթոդական

աշխատանք, որոնց ընդհանուր թիվը 4 է (1 ուսումնամեթոդական ձեռնարկ՝ համահեղինակությամբ, 3 գիտական հոդված՝ տպագրված միջազգային գիտական ամսագրերում, որից 2-ը՝ համահեղինակությամբ):

Ա.Լ.Թումանյանը ունենալով մարդկային բարձր որակներ, վայելում է գործընկերների և ուսանողների հարգանքը, աչքի է ընկնում աշխատասիրությամբ և պարտաճանաչությամբ: Ունենալով երկար տարիների դասավանդման փորձ, մշտապես ձեռք է բերում նոր գիտելիքներ:

Ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնը և գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովը միաձայն երաշխավորել են Ա.Լ.Թումանյանին մասնակցելու Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը դոցենտի գիտական կոչում հայցելու նպատակով

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-

Պրոֆեսոր Դ.Ռ.Գալոյանը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ գիտական խորհուրդը որոշեց Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տնտեսական ինֆորմատիկայի և տեղեկատվական համակարգերի ամբիոնի դասախոս, տնտեսագիտության թեկնածու Անուշ Լավրենտի Թումանյանի թեկնածությունը դնել գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը՝ դոցենտի գիտական կոչում հայցելու նպատակով (որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն. կողմ՝ 50, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

Քվեարկության արդյունքներն են. գիտական խորհրդի 60 անդամից նիստին ներկա էին 50-ը, քվեարկությանը մասնակցել են 50-ը: Փակ գաղտնի քվեարկության արդյունքներն են. կողմ՝ 50, դեմ՝ 0, անվավեր քվեաթերթիկ՝ 0:

ՈՐՈՇԵՑԻՆ.-

1. Հաշվի առնելով, որ **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի տնտեսական ինֆորմատիկայի և**

տեղեկատվական համակարգերի ամբիոնի դասախոս, տնտեսագիտության թեկնածու Անուշ Լավրենտի Թումանյանի կատարած գիտամանկավարժական աշխատանքը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի հուլիսի 9-ի N 615 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտամանկավարժական կադրերին պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ շնորհելու կարգի» (խմբ. 17.02.2022 թ. N 177 - Ն) 2-րդ գլխի 5-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներին՝ **Անուշ Լավրենտի Թումանյանին** շնորհել **դոցենտի** գիտական կոչում **«Տնտեսագիտություն»** բնագավառի **Ը.00.08՝ «Տնտեսության մաթեմատիկական մոդելավորում»** մասնագիտությամբ:

2. **Միջնորդել Հայաստանի Հանրապետության բարձրագույն որակավորման կոմիտեին՝ հաստատելու համալսարանի գիտական խորհրդի որոշումը:**

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**

2023 թ. ապրիլի 18
Երևան